

ոչ այնչափ ճիշդ տեղեկութիւնները՝ Սարուխան
 «Մշակ», 1903, թ. 113, եւ անոր վերջին
 ժամանակի ձեռագիրները, Սրապեան Հ. Ի.
 «Հ. Ա.» 1903, էջ 199, Յուշարձան, 1912,
 էջ 379։)

Քրիստոփորովիչին Տեղապահ ու Աթոռա-
 կալ անուանուեցաւ, կարգադրութեամբ Մոնսի-
 լեւի լատին Մետրապոլիտին, որ բովանդակ Ռու-
 սաստանի կաթողիկեայց Primasն էր, ծերունի
 Տէր Անտոն Վարդերեսեւիչ՝ Լեմբերգի Թեա-
 տինեանց կղերանոցը կրթուած, որ կամենիցի
 կաթողիկէ Հայերու «ադմինիստրատոր», (= Ժո-
 ղովորդապետ) էր, եւ ըստ կայսերական հաստա-
 տութեան եւ հրամանին՝ փոխադրուեցաւ ի
 Մոնսիլեւ։

Հանգուցեալ Քրիստոփորովիչին իբր
 յաջորդ Ս. Ժողովոյ կողմանէ կ'ուզուէր Պօղոս
 Վ. Շահզուլեան, որ Հռոմայ Ուրբանեան Դպրա-
 նոցի աշակերտ՝ եւ Ախալցխայի (տակաւին
 Թրքաց իշխանութեան տակ) փոխանորդի տե-
 ղապահ (vice vicarius) էր, մինչդեռ Մոնսիլեւի
 եւ Խրըմի Ժողովրդեան, եւ ինչպէս կ'երեւայ՝
 նաեւ ռուս պետութեան ընտրելին էր՝ Ղարասու-
 պազարի «ադմինիստրատոր», կոչուող Անտոն
 Արքեպիսկոպոս Պուրաղեան, որուն ամբողջ
 կեանքն պատկերն այս առթիւ երեւան կ'ըլլէ,
 հետեւեալ պարագաներու մէջ։

Իր ինքնագիր մէկ գրութեանը համեմատ՝
 զոր ամբողջ յառաջ պիտի բերեմ՝ քիչ մը վար,
 ծնած էր 1760 Օգոստ. 6ին ի Քուլթայիս, որ